Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվետվություն Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից հրապարակված «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2025»-ի հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 7

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 11

5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 15

6. ԱՄՓՈՓՈՒՄ 18

ՀԱՎԵԼՎԱԾ 20

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԲ	Արհեստական բանականություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆԶԻ	անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս
ԲԱԻ	բազմաչափ աղքատության ինդեքս
ԳԱԻ	գենդերային անհավասարության ինդեքս
ԳԶԻ	գենդերային զարգացման ինդեքս
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ՀԱԵ	համախառն ազգային եկամուտ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄՄՆԶԻ	մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքս
ՄՆԶԶ	մարդկային ներուժի զարգացման զեկույց
ՄՆԶԻ	մարդկային ներուժի զարգացման ինդեքս
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության զարգացումը գնահատելու համար միայն զուտ տնտեսական ցուցանիշները բավարար չեն: Այդ նպատակով առավել նպատակահարմար է կիրառել մարդկային զարգացման հայեցակարգը, որն ի լրումն զուտ տնտեսական ցուցանիշների, հաշվի է առնում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են առողջությունը, կրթությունը, գենդերային հավասարությունը, քաղաքական մասնակցությունը, շրջակա միջավայրի կայունությունը և այլն: Համաձայն այս հայեցակարգի՝ քանի որ երկրի գլխավոր հարստությունը մարդիկ են, ապա, բնականաբար, կարևորագույն նշանակություն ունի մարդկանց արժանապատիվ կյանքը հնարավորինս երաշխավորելը:

Հայեցակարգը ձևակերպվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԿԶԾ) կողմից և հիմնվում է «մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՆԶԻ)» ցուցանիշի վրա, որը, ըստ էության, մարդկանց բարեկեցության և զարգացման համապարփակ գնահատական է:

Հայեցակարգի կիրառումը նպատակահարմար է նաև այն պատճառով, որ այն ունի համընդհանուր ընդունելի և հստակ մեթոդաբանական հիմքեր, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն գնահատելու տարբեր երկրներում առաջընթացը, այլև իրականացնելու համեմատական վերլուծություններ՝ ինչպես միջժամանակային, այնպես էլ միջերկրային:

ՄԱԿԶԾ-ն, 1990 թվականից ի վեր, ամեն տարի հրատարակում է տարեկան զեկույց, որի առանցքում ՄՆԶԻ-ն է: Այդ ամենամյա զեկույցներն ամփոփ տեղեկություն են ներառում տարբեր երկրներում մարդկային զարգացման մակարդակի մասին և միաժամանակ վերհանում են առկա հիմնախնդիրներն ու միտումները:

Քանի որ այս ինդեքսը շահագրգիռ կողմերին հնարավորություն է տալիս ձևավորելու ներառական աճի խթանմանը, անհավասարության նվազեցմանը և կյանքի որակի բարձրացմանը միտված նպատակային ռազմավարություններ, այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ ՄՆԶԻ-ն և դրա հիման վրա կազմվող զեկույցները կարևոր գործիք են թե՛ քաղաքականություն մշակողների և իրականացնողների և թե՛ ոլորտով հետաքրքրվող մասնագետների համար:

Օրերս հրապարակվել է մարդկային ներուժի զարգացման 2025թ. զեկույցը[1]՝ *«Ընտրության հարց. մարդիկ և հնարավորություններն արհեստական բանականության դարաշրջանում»* խորագրով:

Հարկ է նշել, որ «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2025»-ում (այսուհետ՝ Զեկույց) ներկայացված են ՄՆԶԻ-ի 2023թ. տվյալները: Դրանում նաև վերանայվել և թարմացվել են նախորդ տարիների վերաբերյալ անցյալ տարվա զեկույցում հրապարակված տվյալները:

Համաձայն Զեկույցի՝ 2023թ. համաշխարհային միջին ՄՆԶԻ-ին 0.756 միավոր է՝ 2022-ի 0.752 միավորի դիմաց:

Հայաստանի 2023 թվականի ՄՆԶԻ-ն կազմել է 0.811 միավոր: Նախորդ՝ 2023-2024թթ. զեկույցում հրապարակված ինդեքսը՝ 0.786 միավոր, վերանայվել և բարձրացվել է մինչև 0.801 միավոր: Համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը Բարբադոսի հետ կիսում է 69-րդ հորիզոնականը: 2022թ. վարկանիշային դիրքը ևս վերանայվել է՝ 76-րդի փոխարեն 72-րդ հորիզոնական:

Նկատի ունենալով մարդկային զարգացման ամենամյա զեկույցների կարևոր նշանակությունը՝ «Լույս» հիմնադրամը, 2018-ից ի վեր, յուրաքանչյուր տարվա զեկույցի հրապարակումից հետո ներկայացնում է դրա վերաբերյալ հաշվետվություն[2]:

Սույն հաշվետվությունում ամփոփ ներկայացված են ՄՆԶԶ-2025-ի՝ առավելապես ՀՀ-ին վերաբերող դրույթները: Դրանում նախ կատարված է մեթոդաբանական անդրադարձ՝ ներկայացվել են մարդկային ներուժի զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև հակիրճ շարադրված է Զեկույցի՝ աշխարհին վերաբերող առավել ուշագրավ տեղեկատվությունը: Հաջորդիվ ներկայացված է մարդկային ներուժի զարգացման առումով Հայաստանի ներկա իրավիճակի վերլուծությունը: Հաշվետվության հաջորդ մասում կատարված են Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումներ: Դրանից հետո ներկայացվել են մարդկային ներուժի զարգացման գնահատման համար կիրառվող մասնակի ինդեքսները: Հաշվետվությունն ավարտվում է վերլուծության առավել կարևոր արդյունքների ու եզրահանգումների հակիրճ շարադրմամբ:

---

[1] https://hdr.undp.org/system/files/documents/global-report-document/hdr2025reporten.pdf (այցելվել է 12.05.2025թ.):

[2] Բոլոր տարիների վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ https://www.luys.am/...:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ներուժի զարգացման ինդեքսն ագրեգացված ցուցանիշ է և հանդիսանում է երեք ենթաինդեքսների (*առողջության*, *կրթության* և *կենսամակարդակի*) միջին երկրաչափական: Առողջության և կենսամակարդակի ենթաինդեքսները ստանալու համար ստանդարտացվում[3] են համապատասխանաբար *կյանքի սպասվող տևողությունը* և մեկ շնչին ընկնող *համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ)*: Կրթության ենթաինդեքսը հաշվարկվում է երկու ցուցիչների՝ *կրթության սպասվող* և *միջին տևողությունների* հիման վրա. դրանք նախ ստանդարտացվում են, իսկ այնուհետև հաշվարկվում է այդ ստանդարտացված արժեքների միջին թվաբանականը: Կրթության սպասվող տևողությունը չափվում է կրթական տարիների այն քանակով, որն ակնկալվում է, որ անձը կծախսի կրթության վրա, իսկ կրթության միջին տևողությունը 25 և ավելի տարեկան բնակչության կրթական տարիների միջին քանակն է:

Գծապատկեր 1. ՄՆԶԻ-ի կառուցման գործընթացը[4]



[3] Ցուցանիշի ստանդարտացումն ընդունված հանրահաշվական ձևափոխություն է՝ $\frac{\text{փաստացի արժեք}-\text{նվազագույն արժեք}}{\text{առավելագույն արժեք}-\text{նվազագույն արժեք}}$, որի արդյունքում ստացվում է $[0,1]$ միջակայքին պատկանող ինդեքս: Այս ձևափոխությունը թույլ է տալիս տարբեր չափողականություն ունեցող ցուցանիշներից անցում կատարել նույն չափողականության, ինչը հնարավոր է դարձնում տարասեռ ցուցանիշների համադրումը:

[4] Աղբյուրը՝ ՄԱԶԾ պաշտոնական կայք՝ https://hdr.undp.org/data-center/human-development-index#/indicies/HDI (այցելվել է 12.05.2025թ.):

ՄՆԶԶ-ի մեթոդաբանությամբ երկրներն ըստ մարդկային ներուժի զարգացման դասակարգվում են չորս խմբում՝ *մարդկային զարգացման շատ բարձր մակարդակով երկրների խումբ* (եթե ՄՆԶԻ-ն պատկանում է [0.800, 1.000] միջակայքին), *բարձր մակարդակով երկրների խումբ* (եթե ՄՆԶԻ-ն [0.700, 0.799] միջակայքում է), *միջին մակարդակով*՝ [0.550, 0.699] միջակայքի և *ցածր մակարդակով*՝ [0.000, 0.549] միջակայքի դեպքում:

Զեկույցի հիմնական ցուցանիշը ՄՆԶԻ-ն է, սակայն դրանում ներառված են նաև մի շարք մասնակի ինդեքսներ: Ստորև հակիրճ ներկայացվում է դրանցից յուրաքանչյուրի հաշվարկման մեթոդաբանությունը:

ՄՆԶԻ-ում հաշվի չի առնվում մարդկանց միջև անհավասարության առկայությունը: Այդ նպատակով ՄՆԶԶ-ում առաջարկվում է օգտագործել մասնակի ինդեքս՝ *Անհավասարության հաշվառմամբ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ԱՄՆԶԻ)*, որն իրենից ներկայացնում է ՄՆԶԻ-ի ենթաինդեքսների՝ անհավասարությամբ ճշգրտված արժեքների երկրաչափական միջինը: Ըստ էության, եթե մարդկանց միջև անհավասարություն չկա, ԱՄՆԶԻ-ի արժեքը հավասար կլինի ՄՆԶԻ-ին: Իսկ որքան ավելի մեծ է այդ անհավասարությունը, այնքան ԱՄՆԶԻ-ն փոքր է ՄՆԶԻ-ից:

Գենդերային անհավասարությունը, բնականաբար, բացասաբար է ազդում մարդկային ներուժի զարգացման վրա: Այդ բացասական ազդեցությունը հաշվի առնելու նպատակով ՄՆԶԶ-ում ներմուծվել է *Գենդերային զարգացման ինդեքսը (ԳԶԻ)*: Դրա հաշվարկման նպատակով նախ կանանց և տղամարդկանց համար առանձին-առանձին գնահատվում է ՄՆԶԻ-ն, այնուհետև հաշվարկվում է ԳԶԻ-ն՝ որպես դրանց հարաբերություն: Որքան ԳԶԻ-ն մոտ է 1-ին, այնքան փոքր է գենդերային անհավասարությունը: Մարդկային ներուժի ձեռքբերումներում կանանց և տղամարդկանց հավասարության չափանիշ է ծառայում ԳԶԻ-ի բացարձակ շեղումը 1-ից՝ $100 \cdot |\text{ԳԶԻ} - 1|$: Երկրում մարդկային ներուժի ձեռքբերումների առումով գենդերային հավասարությունը համարվում է *բարձր*, եթե բացարձակ շեղումը չի գերազանցում 2.5%-ը, *միջինից բարձր*, եթե այն $(2.5\%, 5\%]$ միջակայքում է, *միջին*՝ $(5\%, 7.5\%]$ միջակայքի, *միջինից ցածր*՝ $(7.5\%, 10\%]$ միջակայքի և *ցածր*՝ 10%-ից ավելի շեղման դեպքում:

Գենդերային անհավասարության պատճառով կորուստներ են առաջանում վերարտադրողական առողջության, աշխատաշուկայի և կանանց իրավունքների ու հնարավորությունների սահմանափակումների իմաստով: Այդ կորուստների գնահատման նպատակով ներմուծվում է *Գենդերային անհավասարության ինդեքս (ԳԱԻ)* ցուցանիշը: Ինչպես և ԱՄՆԶԻ-ն, ԳԱԻ-ն նույնպես հաշվարկվում է որպես դրա համար օգտագործվող ցուցանիշների երկրաչափական միջին: Այդ

ցուցանիշները հինգն են՝ մայրական մահացության գործակից, դեռահասների ծնելիության մակարդակ, խորհրդարանում կանանց տեսակարար կշիռ, առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության տեսակարար կշիռ, աշխատուժի մասնակցության մակարդակ: ԳԱԻ-ի արժեքները նույնպես [0,1] միջակայքից են՝ 0 արժեքը համապատասխանում է գենդերային կատարյալ հավասարությանը, իսկ 1-ը՝ կատարյալ անհավասարությանը:

Շրջակա միջավայրի վրա մարդկության բացասական ազդեցությունը հաշվի առնելու նպատակով 2020-ից ի վեր ՄՆԶԶ-ում ներառվել է նաև *մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը (ՄՄՆԶԻ)*: Դրա հաշվարկման համար ՄՆԶԻ-ում դիտարկվող ցուցանիշներին ավելանում են ևս երկու ցուցանիշ՝ *1 շնչի հաշվով ածխածնային արտանետումներ* և *1 շնչի հաշվով ռեսուրսների սպառում*, որոնցից առաջինը արդյունաբերական գործընթացներում ածխի, նավթի, գազի այրման հետևանքով արտանետված ածխաթթու գազի զանգվածի հարաբերությունն է բնակչության միջին թվաքանակին, իսկ երկրորդը՝ վառելիքային, մետաղական, ոչ մետաղական ռեսուրսների անկայուն սպառման զանգվածի հարաբերությունը բնակչության միջին թվաքանակին: Բնականաբար, այս ցուցանիշների մեծ արժեքները վկայում են շրջակա միջավայրի բարձր անկայունության մասին:

Ինդեքսը հաշվարկվում է երեք քայլով: Նախ՝ վերոհիշյալ երկու ցուցանիշները ստանդարտացվում են: Այնուհետև հաշվարկվում է ճշգրտման գործակիցը՝ ստանդարտացված ցուցանիշների միջին թվաբանականը: Երրորդ քայլով ՄՆԶԻ-ն «ճշգրտվում է»՝

$$\text{ՄՄՆԶԻ} = \text{ՄՆԶԻ} \cdot (1 - \text{ճշգրտման գործակից})$$

բանաձևով:

Բանաձևից երևում է, որ սովորաբար ՄՄՆԶԻ-ն փոքր է ՄՆԶԻ-ից: Ընդ որում, որքան ավելի մեծ է ածխածնային արտանետումների և ռեսուրսների անկայուն սպառման ծավալը, այնքան մեծ է ՄՄՆԶԻ-ի և ՄՆԶԻ-ի շեղումը:

Վերջին մասնակի ինդեքսը «Բազմաչափանիշ աղքատության ինդեքսն» է (ԲԱԻ): Այն աղքատության գնահատման ինտեգրալ ցուցանիշ է, որը հաշվի է առնում նաև աղքատության ոչ տնտեսական ասպեկտները՝ ոչ միայն եկամուտը, այլ նաև կյանքի որակի վրա ազդող այլ գործոններ: ԲԱԻ-ի համար օգտագործվում են երեք խմբում («Առողջություն», «Կրթություն» և «Կենսամակարդակ») ներառված 10 ցուցիչներ, որոնցից յուրաքանչյուրին տրվում են կշիռներ: Մասնավորապես, «Առողջություն» խմբի երկու ցուցիչներին էլ՝ «մանկական մահացությանը» և «թերսնուցման խնդիրներին», տրվում է նույն կշիռը՝ 1/6, «Կրթություն» խմբում ևս երկու ցուցիչ են («կրթության տարիներ» և «դպրոց հաճախելու մակարդակ»)՝

յուրաքանչյուրը 1/6 կշռով: Մնացած 6 ցուցիչները («էլեկտրաէներգիայի հասանելիություն», «սանիտարական պայմաններ», «մաքուր խմելաջրի հասանելիություն», «բնակարանի հատակի որակ», «սնունդ պատրաստելու վառելիք» և «առաջին անհրաժեշտության կենցաղային իրերի տնօրինում») դասվում են «Կենսամակարդակ» խմբին և ունեն նույն՝ 1/18 կշիռը:

ԲԱԻ-ն հաշվարկվում է որպես մեկ, ընդհանրացված ցուցանիշ: Եթե անձը մեկից ավելի խմբերի գծով դասվում է աղքատ, ապա նա համարվում է «բազմաչափանիշ» աղքատ:

ԲԱԻ-ն հնարավորություն է տալիս գնահատել աղքատության տարածվածությունը և խորությունը: Այս ինդեքսը նույնպես արժեքներ է ընդունում 0-ից 1 միջակայքում՝ 0-ն համապատասխանում է բազմաչափանիշ աղքատության բացակայությանը, իսկ 1-ը լիակատար բազմաչափանիշ աղքատությանը:

3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

«Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2025»-ը նախորդ տարիների զեկույցներից առանձնանում է մարդկային զարգացման վրա արհեստական բանականության (ԱԲ) հնարավոր ազդեցությունների վերհանմամբ: Զեկույցում նշվում է, որ ԱԲ-ն զարգանում է չափազանց մեծ արագությամբ և, անկախ դրա նկատմամբ մարդկանց վերաբերմունքից, անհնարին է չընդունել, որ գործ ունենք մի նոր, ուժեղ տեխնոլոգիայի հետ, որն իր էությամբ և ազդեցությամբ տարբերվում է անցյալի բոլոր տեխնոլոգիաներից:

Զեկույցը բաղկացած է վեց գլուխներից: Առաջին գլխում ընդգծվում է այն հիմնական գաղափարը, որ ԱԲ-ն պետք է դիտարկվի որպես մարդու օգնական և ոչ թե մրցակից: Երկրորդ գլխում նշվում է՝ քանի որ ԱԲ-ն կարող է և՛ ուժեղացնել, և՛ սահմանափակել մարդու ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը, դրա կիրառումը պետք է վերահսկվի: Երրորդ գլուխը նվիրված է տարբեր տարիքային խմբերի վրա ԱԲ-ի ազդեցության ուսումնասիրությանը: Զեկույցի չորրորդ գլխում քննարկված են ԱԲ-ի վերաբերյալ մարդկանց տարբեր ընկալումները: Մասնավորապես նշվում է, որ որոշ մարդիկ կարծում են, թե այն լիովին կփոխարինի մարդուն, մյուսները՝ ընդհակառակը, գտնում են, որ այն միայն կվնասի: Զեկույցը խորհուրդ է տալիս այս հարցում առավել հավասարակշռված մոտեցում դրսևորել՝ մասնավորապես, ըստ Զեկույցի, ԱԲ-ն պետք է մարդուն օգնի և ոչ թե՝ սահմանափակի: Պետք է ձգտել նրան, որ բոլորը՝ անկախ սեռից, տարիքից, կարողություններից կամ բնակության վայրից, ԱԲ-ից օգտվելու առումով հավասար հնարավորություններ ունենան: Հինգերորդ գլխում քննարկվող հիմնական հարցերն են՝ «Ովքե՞ր են ստեղծում ԱԲ-ն» և «Ի՞նչ նպատակով է

ստեղծվում ԱԲ-ն»: Վերջին՝ վեցերորդ, գլխում արված են խորհուրդ-առաջարկություններ ԱԲ-ի հետագա զարգացումը մարդկային զարգացմանը ուղղորդելու համատեքստում:

Զեկույցում բազմիցս ընդգծվում է, որ մարդկային զարգացման առաջընթացը զգալիորեն դանդաղել է: Մասնավորապես, չնայած այն հանգամանքին, որ համաշխարհային միջին ՄՆԶԻ-ին 2024 թվականին հասել է իր պատմական առավելագույնին, այնուամենայնիվ, չափազանց մտահոգիչ է, որ դրա աճի տեմպը ամենացածրն է մարդկային զարգացման ամենամյա զեկույցների շարքի մեկնարկից՝ 1990 թվականից ի վեր: 2020-2021 թվականների խոշոր ճգնաժամերից հետո սպասվում էր կայուն վերականգնման շրջան, սակայն համաձայն զեկույցի՝ այդ առաջընթացը անսպասելիորեն թույլ է:

Գծապատկեր 2. Համաշխարհային ՄՆԶԻ-ի դինամիկան



Բացի այդ, Զեկույցը նաև բազմիցս անդրադառնում է այն հարցին, որ հարուստ և աղքատ երկրների միջև անհավասարությունը խորացել է: Մասնավորապես, նշվում է, որ շատ ցածր և շատ բարձր ՄՆԶԻ ունեցող երկրների միջև անհավասարությունը չորրորդ տարին անընդմեջ շարունակում է խորանալ, մինչդեռ նախկինում մշտապես հակառակ միտումն էր առկա:

Գծապատկեր 3. ՄՆԶԻ-ի տարբերությունը «շատ ցածր» և «շատ բարձր» ՄՆԶԻ-ով երկրների միջև



Զեկույցում նշվում է, որ քանի որ գլոբալ «ճնշումների» պատճառով զարգացման ավանդական ուղիները դժվարացել են, աշխարհը երկարատև ստագնացիայից դուրս բերելու ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկելը դարձել է խիստ հրամայական:

Զեկույցում ներկայացված են նաև համաշխարհային մակարդակով կատարված հարցման առավել ուշագրավ արդյունքները: Դրանք ընդհանուր առմամբ վկայում են ԱԲ-ի նկատմամբ մարդկանց զգուշավոր-լավատեսական մոտեցման մասին: Դրանք ցույց են տալիս, որ մարդկանց մեծ մասը հույս ունի, որ ԱԲ-ի կիրառումը կհանգեցնի դրական փոփոխությունների: Մասնավորապես, հարցվածների կեսը կարծում է, որ իրենց աշխատանքը կարող է ավտոմատացվել: 60%-ն ակնկալում է, որ ԱԲ-ն դրական ազդեցություն կունենա իրենց աշխատանքային հնարավորությունների առումով: Հարցվածների միայն 13%-ն է վախենում, որ ԱԲ-ն կարող է հանգեցնել իրենց աշխատանքի կորստի: Ցածր և միջին ՄՆԶԻ-ով երկրներում հարցվողների 70%-ը հույս ունի, որ ԱԲ-ն կնպաստի իրենց արտադրողականության բարելավմանը, երկու երրորդն ակնկալում է, որ իրենք արդեն հաջորդ տարվա ընթացքում կօգտագործեն ԱԲ-ն՝ կրթության, առողջության կամ աշխատանքի ոլորտներում:

Գծապատկեր 4. ԱԲ-ի փաստացի և սպասվող օգտագործումը ՄՆԶԻ-ի տարբեր խմբերում[5]



Զեկույցը կողմ է ԱԲ-ի «մարդակենտրոն» կիրառությանը, ինչը կարող է էապես փոփոխել զարգացման ուղին: Մասնավորապես, նշվում է, որ մարդկության ջանքերը պետք է գործադրվեն հետևյալ երեք կարևորագույն ուղղություններով.

- նպաստել այնպիսի հասարակական-տնտեսական հարաբերությունների ձևավորմանը, որոնք ապահովում են, որպեսզի մարդիկ համագործակցեն և ոչ թե մրցակցեն ԱԲ-ի հետ,

- օգտագործելով տարբեր խթաններ՝ ԱԲ ոլորտի նորարարություններն ուղղորդել այնպես, որ դրանք սկզբից (նախագծում) մինչև վերջ (գործարկում) ենթադրեն մարդու մասնակցություն,

- ներդրումներ կատարել այնպիսի կարողությունների զարգացման մեջ, որոնք նպաստում են ԱԲ-ի հնարավորություններից մարդկանց օգտվելուն (օրինակ, քանի որ ԱԲ-ն ճկուն և հարմարվող է, այն կարելի է օգտագործել կրթությունն ու առողջապահությունն անհատական դարձնելու համար՝ ըստ տարբեր մարդկանց կարիքների):

Ըստ Զեկույցի՝ 2023թ. արդյունքներով ՄՆԶԻ-ի համաշխարհային միջին ցուցանիշը 0.756 է, կյանքի միջին տևողությունը 73.4 տարի, կրթության ակնկալվող տևողությունը 13.0 տարի, կրթության միջին տևողությունը՝ 8.8 տարի, իսկ շնչային ՀՆԱ-ն կազմում է 20,327 PPP դոլար:

[5] Հարցումը կատարվել է 21 երկրում:

2023 թվականի արդյունքներով՝ ըստ ՄՆԶԻ-ի կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակի լավագույն եռյակում են՝ Իսլանդիան (0.972 միավոր), Նորվեգիան (0.970) և Շվեյցարիան (0.970): Դանիան 0.962 միավորով չորրորդ տեղում է: Գերմանիան և Շվեդիան ունեն 0.959 միավոր և կիսում են հինգերորդ հորիզոնականը:

Վարկանիշային աղյուսակի հետնապահը Հարավային Սուդանն է՝ 0.388 միավոր ՄՆԶԻ-ով: Այս տարի նույնպես (ինչպես և նախորդ տարի) վարկանիշային աղյուսակի վերջին հինգ տեղերում միայն աֆրիկյան երկրներ են: Բացի Հարավային Սուդանից վատագույն հնգյակում են՝ Նիգերը (0.419 միավոր), Մալին (0.419 միավոր), Չադը (0.416 միավոր) և Սոմալին (0.404 միավոր):

Մարդկային ներուժի զարգացման առանձին ցուցիչների գծով լավագույն և վատագույն արդյունքները ներկայացված են ստորև:

Կյանքի ամենաերկար *սպասվող տևողությամբ* երկրներն են Մոնակոն (86.4 տարի), Հոնկոնգը (85.5 տարի) և Ճապոնիան (84.7 տարի): Կյանքի ամենակարճ սպասվող տևողությունը Աֆրիկյան երկրներում է. Հարավային Սուդանում՝ 57.6 տարի, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում՝ 57.4 տարի և Չադում՝ 55.1 տարի:

Կրթության սպասվող տևողությամբ նույնպես առաջատարը Մոնակոն է՝ 21.7 տարի: Վերջին տեղում Հարավային Սուդանն է՝ 5.6 տարի:

Կրթության ամենամեծ *միջին տևողությունն* ունի Գերմանիան՝ 14.3 տարի: Այս ցուցիչով հետնապահը Նիգերն է՝ 1.4 տարի:

2023 թվականի արդյունքներով ամենաբարձր *կենսամակարդակ* ունի Լիխտեյնշտայնը, որտեղ շնչային ՀԱԵ-ն 166,812 PPP դոլար է: Ամենացածր կենսամակարդակով երկիրը Հարավային Սուդանն է՝ 688 PPP դոլար շնչային եկամտով: Այսինքն՝ աշխարհում ամենաբարձր և ամենացածր կենսամակարդակ ունեցող երկրների շնչային եկամուտները տարբերվում են ավելի քան 240 անգամ:

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ ՄՆԶԻ-ն 2023թ. արդյունքներով կազմում է 0.811 միավոր՝ նախորդ տարվա ցուցանիշից 0.01 միավորով ավելի: Մարդկային ներուժի զարգացման համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 193 երկրների թվում Բարբադոսի հետ կիսում է 69-րդ հորիզոնականը և ներառված է «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբում: Հատկանշական է, որ Զեկույցում վերահաշվարկվել են Հայաստանի ՄՆԶԻ-ն և

համապատասխանաբար՝ վարկանիշային դիրքը: Մասնավորապես, 2022թ. արդյունքներով նախորդ զեկույցում հրապարակված ՄՆԶԻ-ն 0.786 միավորից բարձրացման ուղղությամբ վերանայվել և դարձել է 0.801 միավոր: **Այսինքն՝ 2022թ. վերահաշվարկված ՄՆԶԻ-ն արդեն գերազանցում է «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբի նվազագույն շեմին՝ 0.800 միավորին: ՄՆԶԻ-ի վերահաշվարկի արդյունքում բարելավվել է նաև Հայաստանի վարկանիշային դիրքը. նախորդ զեկույցում հրապարակված վարկանիշային աղյուսակի 76-րդ հորիզոնականից՝ 72-րդ հորիզոնական:** Հիշեցնենք, որ 1990 թվականին Հայաստանը 0.663 միավոր ՄՆԶԻ-ով համարվում էր մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ ունեցող երկիր և այս ասպարեզում անցած տարիների ընթացքում զգալի առաջընթաց է գրանցել:

Հաշվի առնելով, որ Հայաստանի ՄՆԶԻ-ն ընդամենը 0.011 միավորով է գերազանցում «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբի ՄՆԶԻ-ի նվազագույն շեմին, պետք է նշել, որ մեր երկիրը գտնվում է այս խմբի «վտանգավոր գոտում» (74 երկիր ներառող այս խմբում Հայաստանից ավելի ցածր ՄՆԶԻ ունի ընդամենը 4 երկիր):

Գծապատկեր 5. ՀՀ ՄՆԶԻ-ի դինամիկան



Հայաստանի և սահմանակից երկրների 2023 թվականի ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում և տարածաշրջանի մյուս երկրներում 2023թ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	Շնչային ՀԱԵ, (2021 PPP դոլար)	ՄՆԶԻ
Հայաստան	**75.7**	**14.4**	**11.3**	**20,221**	**0.811**
Իրան	77.7	14.0	10.8	16,096	0.799
Թուրքիա	77.2	19.8	9.0	34,507	0.853
Վրաստան	74.5	16.7	12.7	20,753	0.844
Ադրբեջան	74.4	12.9	11.1	20,668	0.789

Աղյուսակից երևում է, որ տարածաշրջանի հինգ երկրների թվում Հայաստանը ՄՆԶԻ-ով 3-րդն է՝ Թուրքիայից (0.853 միավոր, 51-րդ հորիզոնական) և Վրաստանից (0.844 միավոր, 57-րդ հորիզոնական) հետո: Այս երկու երկրները նույնպես 74 երկրներ ներառող «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբից են: Իրանը և Ադրբեջանը հաջորդ՝ «Մարդկային ներուժի բարձր զարգացմամբ» երկրների խմբում են (այս խումբը ներառում է 50 երկիր): Իրանը տարածաշրջանային վարկանիշային աղյուսակի 4-րդ տեղում է (0.799 միավոր, 75-րդ հորիզոնական), իսկ Ադրբեջանը վերջինն է (0.789 միավոր, 81-րդ հորիզոնական):

Հայաստանի ՄՆԶԻ-ի առողջության ենթաինդեքսի ցուցիչը՝ կյանքի սպասվող տևողությունը 73.4-ից աճել է մինչև 75.7 տարի: Բարելավվել է նաև կենսամակարդակի ենթաինդեքսը. ըստ Զեկույցի 2023 թվականին շնչային ՀԱԵ-ն կազմել է 20,221 PPP դոլար[6], որը 2022-ի ցուցանիշից 31.4%-ով ավելի է: **Այդպիսի կտրուկ աճը Զեկույցում որևէ կերպ չի մեկնաբանված:** Ընդհանրապես, շնչային ՀԱԵ-ի աճը կարող է լինել հետևյալ գործոններից մեկի կամ մի քանիսի պատճառով՝ ՀԱԵ-ի աճ, բնակչության թվաքանակի նվազում և ազգային արժույթի արժևորում: Համաձայն ՀԲ տվյալների բազայի[7]՝ նշված ցուցանիշներից առաջին երկուսի գծով 2023-ին նախորդ տարվա համեմատ արձանագրվել են հետևյալ աճերը՝ ՀՀ դրամով արտահայտված ընդհանուր ՀԱԵ-ի աճ՝ 11.2%, բնակչության թվաքանակի աճ (ոչ թե նվազում)՝ 0.7%: Իսկ համաձայն նույն աղբյուրի՝ ՀՀ դրամով արտահայտված շնչային ՀԱԵ-ն նախորդ տարվա համեմատ աճել է 10.4%-ով: **Այսինքն՝ 2023 թվականին PPP դոլարով արտահայտված շնչային ՀԱԵ-ի 31.4%-ով աճը հիմնականում կարող է բացատրվել դրամի արժևորմամբ:** Զեկույցում նշված է, որ երկրների PPP դոլարով արտահայտված շնչային ՀԱԵ-ի ցուցանիշը վերցված է ԱՄՀ-ի, ՀԲ-ի կամ ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի տվյալների բազաներից[8]:

Տարածաշրջանի բոլոր հինգ երկրներում էլ 2023-ի շնչային ՀԱԵ-ն զգալիորեն գերազանցում է 2022-ի ցուցանիշին, ինչը նույնպես փաստում է, որ հիմնական պատճառն այն է, որ 2022-ի ցուցանիշների հաշվարկման համար դիտարկվել է

---

[6] ԱՄՆ դոլարով արտահայտված փաստացի շնչային ՀԱԵ-ի փոխարեն ներկայացված է գնողունակության համարժեքությամբ «կշռված» շնչային ՀԱԵ-ի ցուցանիշը, որը ստացվում է փաստացի արժեքը միջազգային դոլարի (ըստ գնողունակության համարժեքության և 2021թ. հաստատուն գների) փոխարկելով:

[7] https://databank.worldbank.org/source/world-development-indicators, այցելվել է 12.05.2025թ.

[8] 1. https://data.imf.org/, այցելվել է 12.05.2025թ.
2. https://databank.worldbank.org/source/world-development-indicators, այցելվել է 12.05.2025թ.
3. https://data.un.org/Data.aspx?q=GNI&d=WDI&f=Indicator_Code%3aNY.GNP.PCAP.PP.KD, այցելվել է 12.05.2025թ.

2017թ. PPP դոլարը, իսկ 2023-ի ցուցանիշների համար՝ 2021թ. PPP դոլարը: Շնչային ՀԱԵ-ի ցուցանիշով Հայաստանը գերազանցում է միայն Իրանին:

Հայաստանը 2023-ի արդյունքներով ևս (ինչպես և 2022-ի արդյունքներով) կրթության միջին տևողությամբ տարածաշրջանում երկրորդն է և զիջում է միայն Վրաստանին: Իսկ կրթության սպասվող տևողության ցուցանիշով մեր երկիրը զիջում է նաև Թուրքիային:

Աղյուսակ 2-ում ներկայացված են ՀՀ-ի, տարբեր տարածաշրջանների և երկրների խմբերի 2023թ. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները: **Աղյուսակից երևում է, որ ՄՆԶԻ-ով Հայաստանը 0.103 միավորով զիջում է «Մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակով» երկրների խմբի (որում ներառված է) միջին ցուցանիշին**, 0.099 միավորով գերազանցում է զարգացող երկրների միջինին և 0.055 միավորով՝ աշխարհի միջինին: **Ընդ որում, ՄՆԶԻ-ի բոլոր ենթաինդեքսներով Հայաստանն էապես է զիջում «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացման մակարդակով» երկրների խմբի (իր խմբի) միջինին:** Զարգացող երկրների միջին ցուցանիշներին Հայաստանի ցուցանիշները գերազանցում են մարդկային ներուժի զարգացման բոլոր բաղադրիչների գծով:

Շնչային ՀԱԵ-ով Հայաստանի ցուցանիշը զիջում է նույնիսկ աշխարհի միջինին: Այսինքն՝ Հայաստանը մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակով երկիր է համարվում բացառապես ՄՆԶԻ-ի ոչ տնտեսական բաղադրիչների շնորհիվ:

Աղյուսակ 2. ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ՀՀ-ում, տարբեր տարածաշրջաններում և երկրների խմբերում 2023թ.

	Կյանքի սպասվող տևողություն, տարի	Կրթության սպասվող տևողություն, տարի	Կրթության միջին տևողություն, տարի	Շնչային ՀԱԵ, (2017 PPP դոլար)	ՄՆԶԻ
Հայաստան	**75.7**	**14.4**	**11.3**	**20,221**	**0.811**
Եվրոպա և Կենտրոնական Ասիա (միջին)	74.8	15.6	10.7	23,171	0.818
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան երկրներ (միջին)	75.9	14.6	8.3	19,520	0.775
Հարավային Ասիա (միջին)	71.9	12.1	6.8	8,722	0.672
Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ (միջին)	75.6	14.8	9.1	18,048	0.783
Ենթասահարական Աֆրիկա (միջին)	62.5	10.3	6.2	4,352	0.568
Արաբական երկրներ (միջին)	72.5	12.0	8.1	15,825	0.719
«Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խումբ (միջին)	*80.0*	*16.4*	*12.5*	*53,014*	*0.914*
Թույլ զարգացած երկրներ (միջին)	*66.5*	*10.2*	*5.1*	*3,637*	*0.560*
Զարգացող երկրներ (միջին)	*72.0*	*12.7*	*7.8*	*13,301*	*0.712*
ՏՀԶԿ երկրներ (միջին)	*80.6*	*16.5*	*12.3*	*52,698*	*0.916*
Աշխարհ (միջին)	*73.4*	*13.0*	*8.8*	*20,327*	*0.756*

Հետխորհրդային և նախկին սոցիալիստական՝ անցումային երկրների ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները ներկայացված են կցված Հավելվածում:

5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ինչպես նշվել էր հաշվետվության «Մեթոդաբանություն» բաժնում, չնայած մարդկային զարգացման ամենամյա զեկույցների հիմքը կազմում է ՄՆԶԻ-ն, այնուամենայնիվ, դրանք ներառում են նաև մի շարք մասնակի ինդեքսներ (ԳԶԻ, ԳԱԻ, ԱՄՆԶԻ, ՄՄՆԶԻ և ԲԱԻ):

Հայաստանի համար ԲԱԻ չի հաշվարկվել: Մնացած մասնակի ինդեքսներից յուրաքանչյուրին առնչվող, Հայաստանին վերաբերող, արժանահիշատակ տեղեկատվությունը ներկայացված է սույն բաժնում:

Աղյուսակ 3. ՄՆԶԻ-ն և ԱՄՆԶԻ-ն 2023թ.

	ՄՆԶԻ	ԱՄՆԶԻ	Կորուստը, %
Հայաստան	**0.811**	**0.743**	**8.4**
Իրան	0.799	0.643	19.5
Թուրքիա	0.853	0.708	17.0
Վրաստան	0.844	0.758	10.3
Ադրբեջան	0.789	0.735	6.8
«Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խումբ (միջին)	*0.914*	*0.821*	*10.2*
Զարգացող երկրներ (միջին)	*0.712*	*0.539*	*24.3*
Աշխարհ (միջին)	*0.756*	*0.590*	*22.0*

2023թ. արդյունքներով Հայաստանի ԱՄՆԶԻ-ն կազմել է 0.743 միավոր, որը շուրջ 8.4%-ով պակաս է ՄՆԶԻ-ից: Համաձայն Զեկույցի՝ դա նշանակում է, որ ՀՀ-ում սոցիալական անհավասարությունը մարդկային ներուժի զարգացման վրա ունի 8.4% զսպող ազդեցություն: ՄՆԶԻ-ի՝ սոցիալական անհավասարության պատճառով կորուստն Իրանում, Թուրքիայում և Վրաստանում ավելի մեծ է, քան Հայաստանում: **Պատճառն այն է, որ Հայաստանում առողջապահական և կրթական ծառայությունների համեմատաբար հասանելի լինելը մասամբ մեղմացնում է մարդկային զարգացման վրա սոցիալական անհավասարության բացասական ազդեցությունը:**

Աղյուսակից երևում է, որ Հայաստանի ԱՄՆԶԻ-ն ևս (ինչպես և ՄՆԶԻ-ն) էապես զիջում է «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբի միջին ցուցանիշին: Հայաստանի ԱՄՆԶԻ-ն գերազանցում է զարգացող երկրների և աշխարհի միջին արժեքներին:

Աղյուսակ 4. ՄՆԶԻ-ն և ԳԶԻ-ն 2023թ.

	ՄՆԶԻ		ԳԶԻ	
	իգական	արական	արժեք	խումբ
Հայաստան	**0.812**	**0.807**	**1.006**	**բարձր**
Իրան	0.724	0.828	0.875	ցածր
Թուրքիա	0.822	0.870	0.938	միջին
Վրաստան	0.846	0.839	1.009	բարձր
Ադրբեջան	0.781	0.795	0.983	բարձր
«Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խումբ (միջին)	*0.908*	*0.918*	*0.989*	-
Զարգացող երկրներ (միջին)	*0.685*	*0.733*	*0.934*	-
Աշխարհ (միջին)	*0.737*	*0.772*	*0.955*	-

2023 թվականի արդյունքներով Հայաստանի ԳԶԻ-ն կազմել է 1.006, այսինքն՝ կատարյալ գենդերային հավասարությունից շեղումը կազմում է 0.6%: Հայաստանը կրկին «վերադարձել է» բարձր ԳԶԻ-ով երկրների խումբ, որից դուրս էր մնացել նախորդ տարի: **Ի դեպ, Հայաստանը 2007 թվականից ի վեր միայն 2024-ին է գտնվել ավելի ցածր՝ *միջինից բարձր* խմբում:**

Ուշագրավ է նաև, որ Հայաստանն այն փոքրաթիվ երկրներից մեկն է, որի ԳԶԻ-ն 1-ից մեծ է, այսինքն՝ ստացվում է, որ գենդերային զարգացման առումով կանայք ավելի նախընտրելի իրավիճակում են գտնվում, քան տղամարդիկ:

Այս տարի ԳԶԻ-ի առումով Հայաստանը տարածաշրջանի առաջատարն է:

Աղյուսակ 5. ԳԱԻ-ն և դրա բաղադրիչները 2023թ.

	ԳԱԻ		Մայրական մահացության գործակից	Դեռահասների ծնելիության մակարդակ	Կանանց տեսակարար կշիռը խորհրդարանում, %	Առնվազն որոշակի միջնակարգ կրթությամբ բնակչության տեսակարար կշիռը, %		Աշխատուժի մասնակցության մակարդակ, %	
	արժեք	հորիզոնական				իգական	արական	իգական	արական
Հայաստան	**0.180**	**49**	**27**	**13.4**	**35.5**	**99.1**	**99.3**	**61.6**	**76.8**
Իրան	0.482	123	22	26.2	5.6	59.1	69.5	13.6	67.5
Թուրքիա	0.227	59	17	12.1	19.8	62.0	80.4	35.8	71.2
Վրաստան	0.257	66	28	21.1	18.4	98.2	98.7	53.7	69.6
Ադրբեջան	0.315	80	41	34.8	18.6	98.0	98.4	61.9	69.6
«Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խումբ (միջին)	*0.125*	-	*14*	*10.1*	*30.2*	*90.8*	*92.7*	*54.1*	*69.3*
Զարգացող երկրներ (միջին)	*0.478*	-	*236*	*42.9*	*24.6*	*53.9*	*64.2*	*46.9*	*75.5*
Աշխարհ (միջին)	*0.455*	-	*216*	*39.1*	*26.5*	*62.0*	*70.2*	*48.5*	*74.1*

2023թ. արդյունքներով ևս (ինչպես և 2022թ.) տարածաշրջանում ամենացածր գենդերային անհավասարությամբ երկիրը Հայաստանն է: **Հայաստանում ԳԱԻ-ի**

ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է կանանց՝ քաղաքական գործընթացներում ներգրավվածության և ընդհանուր կրթվածության բարձր մակարդակներով:

Ի դեպ, 2023-ի արդյունքներով ևս (ինչպես և 2022թ.) ԳԱԻ-ն նախորդ տարվա համեմատ նվազել է 0.018 միավորով:

Աղյուսակ 6. ՄՄՆԶԻ-ն 2023թ.

	ՄՆԶԻ	ՄՄՆԶԻ	Կորուստը, %	Ածխածնային արտանե-տումներ, շնչային (տոննա)	Ռեսուրսների սպառում, շնչային (տոննա)
Հայաստան	**0.811**	**0.761**	**6.2**	**2.7**	**8.0**
Իրան	0.799	0.725	9.3	9.2	5.9
Թուրքիա	0.853	0.729	14.5	5.0	20.4
Վրաստան	0.844	0.772	8.5	3.2	11.6
Ադրբեջան	0.789	0.737	6.6	4.2	6.3
«Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խումբ (միջին)	*0.914*	*0.741*	*18.9*	*9.4*	*23.0*
Զարգացող երկրներ (միջին)	*0.712*	*0.653*	*8.3*	*3.6*	*10.7*
Աշխարհ (միջին)	*0.756*	*0.680*	*10.1*	*4.5*	*12.7*

Աղյուսակ 6-ից երևում է, որ 2023-ի արդյունքներով Հայաստանի ՄՄՆԶԻ-ն կազմել է 0.761 միավոր՝ ՄՆԶԻ-ից 6.2%-ով պակաս: Ընդ որում, ինչպես և նախորդ տարի, 2023թ. արդյունքներով ևս Հայաստանի՝ մոլորակային կայունության խախտմամբ պայմանավորված կորուստն ամենափոքրն է տարածաշրջանում: Տարածաշրջանի՝ ՄՆԶԻ-ով առաջատար Թուրքիան ՄՄՆԶԻ-ով դասակարգման դեպքում հայտնվում է երրորդ տեղում: Առաջատարը Վրաստանն է, որին հաջորդում է Հայաստանը:

Հայաստանի՝ մոլորակային կայունության խախտմամբ պայմանավորված կորստի փոքր լինելը, իհարկե, ընդհանուր առմամբ դրական երևույթ է: Այնուամենայնիվ, այս հանգամանքը, միևնույն ժամանակ, խորհելու տեղիք պետք է տա, քանի որ դա կարող է պարզապես Հայաստանի տնտեսապես թույլ զարգացածության հետևանքով լինել:

Հայաստանի ՄՄՆԶԻ-ին գերազանցում է թե՛ «մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբի, թե՛ զարգացող երկրների և թե՛ համաշխարհային միջինին:

Գծապատկեր 6. ՀՀ մարդկային ներուժի զարգացման ցուցանիշների համադրումը երկրների տարբեր խմբերի և աշխարհի միջինների հետ, 2023թ.



Գծապատկեր 6-ից երևում է, որ զարգացող երկրների խմբի, ինչպես նաև աշխարհի միջինի համեմատ Հայաստանում թե՛ ՄՆՀԻ-ի և թե՛ բոլոր մասնակի ինդեքսների՝ ԱՄՆՀԻ-ի, ՄՄՆՀԻ-ի, ԳՀԻ-ի և ԳԱԻ-ի առումով վիճակն ավելի բարվոք է: **«Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբի միջինին Հայաստանը զգալիորեն զիջում է ՄՆՀԻ-ով, ինչպես նաև մասնակի ինդեքսներից 2-ով՝ ԳԱԻ-ով և ԱՄՆՀԻ-ով:**

6. ԱՄՓՈՓՈՒՄ

- **Ըստ «Մարդկային ներուժի զարգացման զեկույց-2025»-ի՝ Հայաստանի «մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» 2023թ. արդյունքներով 0.811 միավոր է, իսկ համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 193 երկրների թվում 69-րդն է և ներառված է «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբում: Հայաստանն իր խմբի միջին ցուցանիշին զիջում է 0.103 միավորով՝ էապես զիջելով նաև բոլոր երեք ենթաինդեքսների միջին արժեքներին: Ավելին, հաշվի առնելով, որ Հայաստանի ինդեքսն ընդամենը 0.011 միավորով է գերազանցում իր խմբի ինդեքսի նվազագույն շեմին, իսկ խմբում ներառված 74 երկրներից Հայաստանից ավելի ցածր ինդեքս ունեն միայն չորսը, պետք է նշել, որ մեր երկիրը գտնվում է «վտանգավոր գոտում»:**

Նախորդ տարվա ցուցանիշի համեմատ Հայաստանի «մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» բարձրացել է՝ հիմնականում պայմանավորված կենսամակարդակի ենթաինդեքսի (մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամտի) կտրուկ (31.4%) աճով: Այդ աճը մեծ մասամբ բացատրվում է դրամի

արժևորմամբ: Այնուամենայնիվ, Հայաստանի շնչային համախառն ազգային եկամտի ցուցանիշը փոքր է աշխարհի միջինից, և Հայաստանը մարդկային ներուժի զարգացման շատ բարձր մակարդակով երկրների շարքում է շնորհիվ «մարդկային ներուժի զարգացման ինդեքսի» ոչ տնտեսական բաղադրիչների:

- «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսով» Հայաստանը տարածաշրջանի հինգ երկրների թվում երրորդն է՝ Թուրքիայից և Վրաստանից հետո:

- ՀՀ-ում սոցիալական անհավասարությունը մարդկային ներուժի զարգացման վրա ունի 8.4% զսպող ազդեցություն (այսինքն՝ սոցիալական անհավասարության պատճառով «մարդկային ներուժի զարգացման ինդեքսի» կորուստը 8.4% է): Ինդեքսի համեմատաբար փոքր կորստի պատճառն այն է, որ Հայաստանում առողջապահական և կրթական ծառայությունների համեմատաբար հասանելի լինելը մասամբ մեղմացնում է մարդկային զարգացման վրա սոցիալական անհավասարության բացասական ազդեցությունը:

- «Գենդերային զարգացման» և «գենդերային անհավասարության» ինդեքսներով Հայաստանը տարածաշրջանի առաջատարն է՝ շնորհիվ քաղաքական գործընթացներում կանանց ներգրավվածության և նրանց ընդհանուր կրթվածության համեմատաբար բարձր մակարդակների:

- «Մոլորակային կայունության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսով» Հայաստանը տարածաշրջանում զիջում է միայն Վրաստանին:

- «Գենդերային անհավասարության» և «անհավասարության հաշվառմամբ՝ մարդկային ներուժի զարգացման» ինդեքսներով Հայաստանը զգալիորեն զիջում է «Մարդկային ներուժի շատ բարձր զարգացմամբ» երկրների խմբի միջին արժեքներին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՆԶԻ-ն և դրա բաղադրիչները նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, 2023թ.

ՄՆԶԻ-ի հորիզո-նական	Երկիր	Մարդկային ներուժի զարգացման ինդեքս (ՄՆԶԻ)	Կյանքի սպասվող տևողությունը, տարի	Կրթության սպասվող տևողությունը, տարի	Կրթության միջին տևողությունը, տարի	Համախառն ազգային եկամուտ (ՀԱԵ) 1 շնչի հաշվով, PPP դոլար	ՄՆԶԻ-ի հորիզոնական (2022թ.)	ՄՆԶԻ-ի հորիզոնականի փոփոխությունը 2022թ. համեմատ, +՝ բարելավում, -՝ վատթարացում, 0՝ անփոփոխ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՏ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ								
21	Սլովենիա	0.931	81.6	17.5	13.0	46,361	21	0
29	Չեխիա	0.915	79.8	16.8	13.0	45,889	28	-1
35	Լեհաստան	0.906	78.6	16.7	13.2	42,218	33	-2
36	Էստոնիա	0.905	79.2	16.0	13.6	40,881	33	-3
39	Լիտվա	0.895	76.0	16.5	13.6	41,916	39	0
41	Խորվաթիա	0.889	78.6	16.3	12.1	41,380	40	-1
41	Լատվիա	0.889	76.2	16.5	13.4	37,998	43	2
44	Սլովակիա	0.880	78.3	14.9	13.1	36,793	44	0
46	Հունգարիա	0.870	77.0	15.5	12.3	37,236	46	0
48	Չեռնոգորիա	0.862	77.1	15.5	12.8	28,026	48	0
55	Բուլղարիա	0.845	75.6	15.3	11.5	32,175	57	2
55	Ռումինիա	0.845	75.9	14.1	11.6	39,374	54	-1
57	Վրաստան	0.844	74.5	16.8	12.7	20,753	55	-2
60	Ղազախստան	0.837	74.4	14.0	12.5	30,989	59	-1
62	Սերբիա	0.833	76.8	15.0	11.6	23,115	61	-1
64	Ռուսաստանի Դաշնություն	0.832	73.2	13.2	12.4	39,222	61	-3
65	Բելառուս	0.824	74.4	13.7	12.3	26,725	64	-1
68	Հյուսիսային Մակեդոնիա	0.815	77.4	14.8	10.2	22,128	67	-1

69	***Հայաստան***	***0.811***	***75.7***	***14.4***	***11.3***	***20,221***	***72***	***3***
71	Ալբանիա	0.810	79.6	14.5	10.2	17,627	70	-1
74	Բոսնիա և Հերցեգովինա	0.804	77.9	13.2	11.0	19,827	73	-1
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ								
81	Ադրբեջան	0.789	74.4	12.9	11.1	20,668	82	1
86	Մոլդովա	0.785	71.2	14.6	11.8	15,867	82	-4
87	Ուկրաինա	0.779	73.4	13.3	11.1	16,933	90	3
95	Թուրքմենստան	0.764	70.1	13.2	11.2	17,716	96	1
107	Ուզբեկստան	0.740	72.4	12.5	11.9	8,826	107	0
117	Ղրղզստան	0.720	71.7	12.7	12.1	6,078	118	1
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ								
128	Տաջիկստան	0.691	71.8	10.8	11.3	5,747	129	1

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: